

**

Խօսակցութիւն մը կ'ընէրու բաղանիքին մէջ:

–Սա օրիորդը ո՞վ է, տիկին:

–Չե՞ս ճանաչեր, մեր դրացին է, Լուսիկն է:

–Լուսի՞կն է... սխալ է, տիկին. Լուսիկը ճերմակ է. այս սեւի մօտ բան մ'է...

–Բաղանիքէն ելնելուն պէս դարձեալ կը ճերմկնայ:

Դիտողութիւն.– Ամուսնական շատ մը կոնիւնէր կը վերնային՝ երբ խօսկապը բաղանիքի մէջ տրուէր:

22 Յունիս

Կիրակի. – Պ. Նորայր Բիւզանդացի միշտ կ'աշխատի իւր Գաղղիարէն - Հայերէն բառարանին, որ մեծ առաւելութիւններ ունի իւր նախորդներու վրայ:

Ահա մարդ՝ որուն ամեն քաջալերութիւն արժանի է. ահա գործ՝ որուն ամեն բարի ընդունելութիւն կը վայելէ:

Տասը հարուստ վաճառական այսօր միանալով ընկերութիւն մը կազմեցին՝ Նորայրի Բառարանին մէկ բաժանորդ գրուելու համար....:

23 Յունիս

Հայաստանի խնդրոյն նկատմամբ Բ. Դուռն այսօր պատասխան տուաւ վեց տէրութիւններու ծանուցագրին:

Յիշեալ պատասխանին մէջ Բ. Դուռը կ'ըսէ, թէ շատ բարենորոգումներ ըրած է Հայաստանի մէջ, թէ իրաց վիճակը քննելու համար քննիչներ ղրկած է – Քննիչ ղրկելը մեծ բարենորոգում մ'է մեզի համար – թէ *Ժանտարմըրի* կազմած է, եւ եթէ *Ժանտարմըրին* չենք տեսներ այսօր՝ պատճառն այն է որ Բ. Դուռը փառասէր չլինելով՝ միշտ գաղտնի բարիք կը գործէ ըստ Աւետարանին, թէ աջ ձեռքին տուածը ձախը տեսնելու չէ. թէ միտք ունի Հայաբնակ գաւառները *նահիէներու* բաժանել եւ անոնց *քայմաքամ* ընտրել այն մասէն, որ մեծամասնութիւն կը կազմէ. (թոյլ պիտի տա՞ն արդեօք, որ Հայերը մեծամասնութիւն կազմեն). թէ տուրքերու տասներորդ մասը *նահիէներուն* բարոյական եւ նիւթական յառաջադիմութեանը պիտի յատկացուի – խոստովանիմ եւ հաւատամ – թէ շարժուն դատական խորհուրդներ պիտի կազմուին՝ զլիաւոր քաղաքներ երթալով